Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի <<Հովքի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի (17դասաժամ),գինեկի (1դրույք) ,քիմիայի (6դասաժամ), ռուսաց լեզվի (6դասաժամ), տեխնոլոգիայի (աղջիկների և տղաների խմբեր, 4-ական դասաժամ), կերպարվեստի (2դասաժամ), ինֆորմատիկայի և թվային գրագիտության և համակարգչային գիտության (6դասաժամ),ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (ձև 1),

-1լուսանկար 3x4չափի,

- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում էապրիլի 12-ից մինչև ապրիլի 26-ը ներառյալ ,ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը ,բացի շաբաթ,կիրակի

և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա ապրիլի 28-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Տավուշի մարզի Հովքի միջնակարգ դպրոցում

հասցեն՝ գ.Հովք, փող.3,43 շենք: Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 15-13-43 հեռախոսահամարով: